


Կապույտ Կարգ



Դ. ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐՅԱԿ

ՎՈՐՍՈՐԴ ՅԵՄԵԼՅԱՆ

ՊԵՏՂՐԱՏ 1936
ՅԵՐԵՂԱՆ



ՄՏՈՒԳՎԱԾ Է 1961 Ս.

891.71-93



Գ. ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐՅԱԿ

ՎՈՐՍՈՐԴ ՅԵՄԵԼՅԱՆ

Նկարներ Ե. ԼԻՍՆԵՐԻ

Ռուսեր. քարզմանց Հ. ՀՄ ՅՐԱՊԵՏՅԱՆ



Պ Ե Տ Ս Վ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ի Թ Յ Ո Ի Ն
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 3 7

1010798

A 23242

Պատ. խմբագիր՝ [REDACTED]
Տեխն. խմբագիր՝ Ա. Խ ու ղ ա վ եր դ յ ա ն ,
Սրբազրիչ՝ Ռ. Ն Ե ա ն յ ա ն

Գլավիլիսի լիազոր Ա.—1182, հրատ. 3854
Պատվեր 1091, Տիրաժ 3000
Պետհրատի սպարան, Ցերեվան, 11 Գնունյանցի, 4



Հեռո՛ւ, հեռո՛ւ, Ուրալյան լեռների հյուսիսային մասում, անանցանելի անտառի խորքում, թաղնված է Տիչկի գյուղը:

Այդ գյուղում ընդամենը տասնմեկ տուն կա, իսկապես տասը, վորովհետեւ տասնմեկերորդ խրճիթը բոլորովին առանձին տեղ է — հենց անտառի մոտ: Գյուղի շուրջը, ատամնավոր սլառի նման բարձրանում է մշտադալար փշատերև անտառը: Յեղևնիների և կուենիների դազաթներից կարելի չէ տեսնել մի քանի սար, վորոնք, կարծես զխամամբ, Տիչկին շրջապատել էին կապտա-մոխրագույն հսկա պատնեշներով: Տիչկիին ամենից մոտ է սապատավոր Ռուչեի սարը, ալեհեր բրդոտ կատարով, վորն ամպամած լեզանակին բոլորովին թաղնվում է պղտոր, մոխրագույն ամպերի մեջ:

Այդ սարից շատ աղբյուրներ ու առվակներ են վազում: Մի աղբյուրի առվակ ուրախ գլորվում է Տիչկիի մոտով թե՛ ձմռանը և թե՛ ամռանը, ու բոլորովին սառը, արցունքի նման մաքուր ջուր է տալիս:

Տիչկիում խրճիթները կառուցված են առանց հատակագծի, ով ինչպես ցանկացել է: Խրճիթներից լերկուսը գտնվում են հենց գետի մոտ, մեկը՝ սարի սեպ լանջի վրա, իսկ մյուսները ցրված են ափին, ինչպես վոչխարներ:

Տիշկիւում մինչեւ անգամ փողոց ել չկա. աների տրանքը կտրոււմ ե մի մաշված արահետ: Ասենք Տիշկիի գլուղացիներին համար փողոց թերևս բոլորովին հարկավոր չէ, վորովհետև բան չկա, վոր փողոցով անցնի: Տիշկիւում փոշ վոք սալ չունի: Ամռանն այս գլուղը շրջապատված ե լինում անանցանելի ճահիճներով, թավուտներով, աչնպես վոր անտառի նեղ շավիղներով վոտքով հազիվ կարելի չեր լինում անցնել, աչն ել վոչ միշտ: Վաս լեղանակներին լեռնալին գետակները հորդանում են և հաճախ պատահում ե, վոր Տիշկիի վորսորդները լերեք որով սպասում են, վոր շուրը նստի:

Տիշկիի բոլոր գլուղացիներն իսկական վորսորդներ են: Ամառը և ձմեռը նրանք անտառից լերեք դուրս չեն գալիս: Տարվա չուրաքանչյուր լեղանակին իրենց հետ բերում են վորոշ վորս. ձմռանն սպանում են արջ, գայլ, աղվես, կղաքիս, աշնանը՝ սկյուռ, գարնանը՝ վալրի ալծ, ամռանը ամեն տեսակ թռչուն: Մի խոտքով ամբողջ տարին ծանր և հաճախ վտանգավոր աշխատանքի մեջ են լինում:

Աչն խրճիթում, վոր գտնվում եր անտառի մոտ, ապրում եր ծերունի վորսորդ Յեմելյան իր փոքրիկ թոռան՝ Գրիշայի հետ:

Յեմելյայի խրճիթը բոլորովին թաղվել եր գետնի մեջ, աշխարհին միայն մի սլատուհանով եր նայում, կրտուրը վաղուց եր փտել, ծխնելուղից միայն թափթփված աղուսներ ելին մնացել: Վոչ ցանկապատ ուռներ, վոչ դարպաս, վոչ սրահ — Յեմելյայի խրճիթը վոչինչ չուներ: Միայն չտաշված գերաններից շինված սանդուխքի տակ գիշերները սոված Լիսկոն եր վոռնում, — վորը Տիշկիի լավագուցն վորսորդական շներից մեկն եր: Ամեն անգամ վորսի գնալուց, Յեմելյան լերեք որ սոված եր պահում դժբախտ Լիսկոյին, վոր լավ վորոնի վորսը և հետևի ամեն մի գաղանի:

— Պասլի, այ պապի, — դժվարութամբ հարցրեց փոք-



— Այ թե, պապի, մի հորք նարե՞նք, հա՛...

քիկ Գրիշան մի լերեկո: — Այժմ պախրաներն իրենց հորթերի հետ են ման գալիս, հա:

— Հորթերի հետ, Գրիշկա, — պատասխանեց Յեմելյան, — շարունակելով հյուսել իր նոր տրեխները:

— Այ թե, պապի, մի հորթ ճարենք, հա...

— Սպասիք, կճարենք... Յեղանակը տաք է, պախրաներն իրենց հորթերի հետ, բոռերից պաշտպանվելու համար, պետք է թագնվեն անտառի խորքում: Հենց այդտեղից էլ լես քեզ համար հորթուկ կճարեմ, Գրիշկա:

Յերեխան վոչինչ չպատասխանեց, միայն ծանր հառաչեց:

Գրիշան միայն վեց տարեկան էր, և այժմ լերկրորդ ամիսն էր, վոր հիվանդ պառկած էր փայտե լաչն նստարանի վրա, պախրալի տաք մորթու տակ:

Յերեխան մրսել էր դեռ գարնանը, լերբ ձյունը հալվում էր և չէր առողջանում: Նրա թուխ դեմքը՝ գունատվել ու ձգվել էր, աչքերը մեծացել էլին, քիթը սրվել էր: Յեմելյան տեսնում էր, թե ինչպես էր թոռը հալվում վոչ թե որերով, այլ ժամերով, բայց չգիտեր թե ինչով ոգներ: Ինչ վոր խոտի հյուլթ էր խմացնում, լերկու անգամ բազնիք էր տարել. սակայն հիվանդը չէր առողջանում: Յերեխան համարյա թե վոչինչ չէր ուտում: Միայն լերբեմն չոր հացի կեղեվ էր կրծում: Գարնանից այժի ադած միս էր մնացել, բայց Գրիշան այդ մսի վրա նայել անգամ չէր կարողանում:

«Այ թե ինչ է ուզում, — հորթուկ... — մտածում էր ծերունի Յեմելյան, շուռ ու մուռ տալով իր տրեխը, — պետք է ճարել»:

Յեմելյան լոթանասուն տարեկան էր — ալեհեր, մեջքը կորացած, նիհար, լերկար ձեռներով: Յեմելյալի ձեռքի մատները հազիվ էլին ծուլում, կարծես փայտե ճյուղեր լինելին: Սակայն նա դեռ կայտառ էր քայլում և վորսի գնում: Միայն աչքերն սկսել էլին ուժեղ կերպով դաժանել ծերունուն, առանձնապես ձմռանը, լերբ ձյունը

կայծկլտում եր ու փայլում: Յեմելլայի աչքերի պատճառով, ծխնելուչն էլ եր թափվել, տանիքն էլ եր փառել, ինքն էլ հաճախ նստում եր խրճիթում, չերբ ուրիշներն անտառումն ելին լինում:

Փամանակ եր, վոր ծերունին հանդատանար տաք վառարանի վրա, բայց փոխարինող չուներ... Մի կողմից էլ Գրիշան. պետք է նրա մասին հող տանել: Յերեք տարի առաջ Գրիշայի հայրը մեռավ Չերմախտից, մորը կերան դայլերը, չերբ նա փոքրիկ Գրիշայի հետ ձմռան գլշերին գլուղից իր խրճիթն եր վերադառնում: Յերեխան ազատվեց ինչ վոր հրաշքով: Մայրը, չերբ գայլերը կրծում էին նրա վտաները, իր մարմնով ծածկեց չերեխային և Գրիշան կենդանի մնաց:

Ծերունի պապը պետք է մեծացներ թողանը: Հիվանդուլթյուն էլ պատահեց: Դժբախտությունը մենակ չի գալիս...

2

Հուլիս ամսի վերջին որերն ելին — ամենաշող ժամանակը Տիչկիում: Տանը մնացել ելին միայն ծերունիներն ու փոքրիկները: Վորսորդները վաղուց ելին անտառում պախրա վորոնում: Յեմելլայի խրճիթում խեղճ Լիսկոն չերեք որ է ինչ վոռնում եր սովից, ինչպես գալլ ձմռանը:

— Յերեի, Յեմելլան պատրաստվում է վորսի գնալու, — ասում ելին գլուղի պառավները:

Իսկպես Յեմելլան շուտով դուրս չեկավ կայծաքարի հրացանը ձեռքին, Լիսկոյին արձակեց և ուղղվեց դեպի անտառը: Նա հագել եր նոր արեխներ, պատառոտված բաձկոն, գլխին գրել եր տաք, չեղնիկի մորթու գլխարկ, մեջքին պարկ, մեջը հաց: Ծերունին վաղուց ծղոտե գլխարկ չեր ծածկում, այլ ձմեռ, թե ամառ, չեղնիկի մորթու գլխարկ եր ծածկում, վորը նրա ճազատ գլուխը հրաշալի վերստի պաշտպանում եր ձմռան ցրտից և ամռան շոգից:

— Դե, Գրիշուկ, իմ բացակայութեան ժամանակ առողջացիր,— ասաց Յեմեկյան թոռանը, հրաժեշտ տալիս:— Մինչեւ իմ գալը քեզ մտիկ կտա պառավ Մալանյան:

— Իսկ հորթուկ կբերե՞ս, պապի:

— Ասացի, վոր կբերեմ:

— Դեղի՞ն:

— Դեղի՞ն:

— Դե, լես կսպասեմ քեզ... Նայիր, կրակելիս չվրիպես...

Յեմեկյան վաղուց եր պատրաստվել պախարալի վորսի գնալու, բայց մեղքն եր գալիս, վոր թոռանը մենակ թողնի: Իսկ այժմ, լերբ լերեխան, կարծես թե, քիչ լավ եր, ծերունին վորոշեց վորձել իր բախտը: Պառավ Մալանյան ել մտիկ կտա լերեխային, վոր ավելի լավ եր նրա համար, քան մեն-մենակ խրճիթում պառկելը:

Յեմեկյան անտառում ինչպես իր տանն եր: Յեւ ինչպես չճանաչեր այդ անտառը, քանի վոր վողջ կյանքն անց եր կացրել այգուեղ, հրացանը ձեռքին, շունը՝ լետեին: Հարյուր վերստ շրջապատի բոլոր շավիղները, բոլոր նշանները ծերունին ճանաչում եր:

Իսկ այժմ, հուլիսի վերջին, անտառն առավել ևս լավ եր. խոտը բացված ծաղիկներով խաչտափայլում եր, ողում տարածված եր հոտավետ խոտերի հրաշալի բուրմունքը, լերկնքից նայում եր ամռան սիրալիք արևը, վորն իր պայծառ լույսը տարածել եր և՛ անտառի, և՛ խոտի, և՛ ճահճուտով հոսող գետակի, և՛ հեռավոր սարերի վրա:

Այն, շրջապատը հրաշալի լեր, և Յեմեկյան շատ անգամ կանգ առավ շունչ առնելու և զիտելու համար:

Այն շավիղը, վորով նա դնում եր, ոձի նման վորս-վելով, սարն եր բարձրանում, ահագին քարեր ու սեւ վորոշեր անցնելով:

Մեծ ծառերը կտրատված ելին, իսկ ճանապարհի մոտ պատասպարվել ելին մատղաշ կեչիներ, ցախկեռասենու թփեր և կանաչ վրանի նման փուվել եր արուսենին: Այս-

տեղ, աջնտեղ պատահում ելին մատղաշ անտառակներ, վորտեղ աճում ելին լեղեղնիներ, վորոնք կանաչ խոզանակի նման կանգնած ճանապարհի կողքին, ուրախ ցցել ելին իրենց թաթածեվ ու բրդոտ ճուղերը:

Մի տեղ, սարի կիսից, լայն տեսարան եր բացվում դեպի հեռավոր սարերը և Տիչկին: Գլուղը բոլորովին թաղնվել է լեռնային հովտի հատակում, իսկ գլուղական խրճիթներն այդ տեղից թվում ելին վորպես սև կետեր:

Յեմեկան, արևի լուսի պատճառով աչքերը ծածկելով, լերկար ժամանակ նայում եր իր անակին և մտածում թոռան մասին:

— Գե, կիսկն, վորոնիր, — ասաց Յեմեկան, չերը իջան սարից և արահետից ծովեցին դեպի համատարած խիտ լեղենուտը:

Հրամանը կրկնել պետք չեր: կիսկոն շատ լավ գիտեր իր գործը: Սուր գունչը քսելով գեսնին, շունն անհայտացավ կանաչ ու խիտ անտառի մեջ, միայն լերբեմն չերևում եր նրա դեղին բծերով մեջքը:

Վորսն սկսվեց:

Հսկա լեղենիներն իրենց սուր կատարներով բարձրացել ելին դեպի լերկինք. նրանց թավարծի ճուղերը հյուսվել ելին իրար հետ և վորսորդի գլխին սև, անթափանցիկ կամար կազմել, վորի մեջ տեղ-տեղ միայն փայլփրլում եր արևի ճառագայթը և իր վոսկե բծով այրում դեղնագուլն մամուռը կամ ձարխոտի լայն տերևը: Այդպիսի անտառում խոտ չի աճում, և Յեմեկան անցնում եր փափուկ, դեղնագուլն մամուռի, ինչպես գորգի վրայով:

Մի քանի ժամ վորսորդը թափառում եր անտառում, կիսկոն կարծես ջուրն եր ընկել: Միայն լերբեմն ճուղ եր չըթում, կամ չալիկ փայտփորիկը՝ թռչում: Յեմեկան ուշադրութլամբ դիտում եր շուրջը. վորևե տեղ հետք չկա արդյոք, պախրան իր լեղջուրներով ճուղ չի՞ կտրել, մամուռի վրա պախրայի լերկճուղ կճղակի հետք չկա արդյոք, կոճղերի խոտից պախրան չի՞ կերել:

Սկսեց միջներ Յեմեյլյան հոգնածութիւնն զգաց: Հար-
կալոր եր գիշերելու տեղի մասին մտածել:

«Յերևի պախրաներին ուրիշ վորսորդներ վախեցրել
են», — մտածեց Յեմեյլյան:

Բայց ահա լավեց Լիսկոյի թույլ փութոցը և առջե-
վում ճշուղերը ճթճթացին, Յեմեյլյան հենվեց լեզկնու-
քնին և սպասում եր:

Պախրա լեր: Իսկական՝ տասը լեղջուրանի զեղեցիկ
պախրա, ամենաազնիվը անտառի կենդանիներից: Ահա
նա իր ճշուղավոր լեղջուրները դրեց մեջքին և ուշադ-
րությամբ լսում ե, հոտոտելով ոգը, վորպեսզի հետևյալ
րոպեյին կաշձակի նման անհայտանա կանաչ անտառում:

Ծերունի Յեմեյլյան տեսավ պախրային, բայց պախ-
րան շատ հեռու լեր, գնդակը չեր հասնի: Լիսկոն պառ-
կած ե անտառում և չի համարձակվի ծայտուն հանել —
կրակոցի լե սպասում. նա լսում ե — պախրան զգում ե
իր հոտը:

Հրացանը պալթեց և պախրան նետի պես առաջ սլա-
ցավ: Յեմեյլյան վրիպեց, իսկ Լիսկոն սովից վրոնաց: Խեղճ
շունն արդեն զգում եր տապալած պախրայի մտի հոտը,
տեսնում եր համեղ վոսկորը, վոր տվել եր նրան տերը,
իսկ դրանց փոխարեն, ստիպված եր դատարկ փորով քնել:


— Թողզբոսնի, — ասում եր Յեմեյլյան, լերը լերեկոյան
նստել եր հարչուբամյա լեզկնու տակ, կրակի առաջ: —
Մենք պետք ե հորթուկ գտնենք, Լիսկո... Լսում ես:

Շունը միայն պոչը շարժեց, սուր դունչը գնելով
առջևի վոտները վրա:

Նրան այսոր հագիվ հացի մի չոր կեղև բաժին ըն-
կավ, վորը նրա առաջը գցեց Յեմեյլյան:

Յերեք որ Յեմեյլյան շան հետ թափառեց անտառում,
բայց իզուր. պախրա, իր հորթուկի հետ միասին չպատահեց:

Ծերունին զգում եր, վոր ուժասպառ ե լինում, բայց
դատարկ ձեռքերով տուն դառնալ չեր ուզում: Լիսկոն



Հորբուկը բփի սակ կանգնած, աշխատում էր բռնել նյուրէ.

նուչնպես վհատվել եր ու բոլորովին նիհարել, թեև արդեն մի զուգ վոքորիկ նապաստակ եր բռնել:

Ստիպված ելին չեբրորդ գիշերն ել անցկացնել անտառում, կրակի մոտ: Բայց քնի մեջ ել ծերունի Յեմեւլյան տեսնում եր ղեղին հորթուկ, վորի մասին խնդրել եր Գրիշուկը: Ծերունին չերկար ժամանակ հետևում եր իր վորսին, նշան եր առնում, բայց պախրան ամեն անգամ փախչում եր նրա քթի տակից: Լիսկոն, նուչնպես, չերևի չերազում պախրա չեր տեսնում, վորովհետև քնի մեջ մի քանի անգամ մոմուաց և խուլ հաջեց:

Միայն չորբորդ որը, չերք վորսորդն ու շունը բոլորովին ուժասպառ ելին չեղել, բոլորովին պատահաբար պախրայի և հորթուկի հետքերի վրա ընկան: Հետքերը չեղևնուլ խիտ թփուտումն ելին, սարի վրա: Ամենից առաջ Լիսկոն գտավ այն տեղը, վորտեղ գիշերել եր պախրան, ապա և խճճված հետքը խոտի մեջ:

«Մայրն իր հորթուկի հետ», — մտածում եր Յեմեւլյան, դիտելով խոտի վրա չեղած մեծ ու փոքր կճղակները հետքը: — «Այսոր առավոտյան այստեղ են չեղել... Լիսկո, վորոնիք սիրելիս»...

Շոգ որ եր: Արեգակն անխնա այրում եր: Շունը, չեղուն հանած, հոտոտում եր թփերն ու խոտը: Յեմեւլյան հազիվ եր վորոները քաշ տալիս:

Բայց ահա ծանոթ չրթոց և խշշոց... Լիսկոն պառկեց խոտի վրա ու չչարժվեց: Յեմեւլյայի ականջում հնչում ելին թոռան խոսքերը. «Պապի, մի հորթուկ ճարիր... Յեվ անպատճառ ղեղին լինի»... Ահա մայրը: Մի հիանալի պախրա: Կանգնած եր անտառի չեղրին և վախեցած ուղիղ Յեմեւլյային եր նայում: Մի խումբ ժրժացող միջատներ պտավելով պախրայի վրա, ստիպում ելին ցնցվել:

«Վոչ, ինձ չես խաբի», — մտածում եր Յեմեւլյան, սողալով իր դարանից: Պախրան վաղուց եր վորսորդի հոտն առել և համարձակ հետևում եր նրա շարժումներին:

«Մայրն ինձ իր հորթուկից հեռացնում է», — մտածեց Յեմեւլյան, ավելի առաջ սողալով:

Յերբ ծերունին ուզում էր հրացանը նշան բռնել, պախրան զգուշ մի քանի սաժեն հեռու վազեց և կրկին կանգնեց: Յեմելյան նորից առաջ սողաց: Պախրան կրկին անհայտացավ, չերբ Յեմելյան ուզեց հրացանն արձակել

— Հորթուկից չես հեռանա, — շնչաց Յեմելյան, համբերությամբ մի քանի ժամ կենդանուհն հետեւելով:

Այս պաշարը, մարդու և կենդանու մեջ, շարունակվեց մինչև չերեկո: Ազնիվ կենդանին տասն անգամ իր անձը վասնդի չենթարկեց, աշխատելով վորսորդին հեռացնել թագնված հորթուկից: Ծերունի Յեմելյան և՛ բարկանում, և՛ զարմանում էր իր զոհի համարձակության վրա: Ձե՞ վոր, միևնույն է, հորթուկից չեր հեռանա... Դանի անգամ էր նա սողանել այդ ձևով իրեն գոհող մորը... Լիսկոն ստվերի պես սողում էր տիրոջ չետեվից և չերբ վորսորդն աչքից կորցրեց պախրային, շունն իր տաք քիթը խփեց նրան:

Ծերունին շրջվեց ու նստեց: Իրենից տասը սաժեն հեռավորության վրա, ցախիեռասի թփի տակ, կանգնած էր այն դեղին հորթուկը, վորի մասին չերեք որ չերազել էր: Մի հրաշալի հորթուկ էր, միայն չերեք շաթական, դեղին աղվամազով, բարակ վոտիկներով: Գեղեցիկ գլուխը չետ էր գցել և բարակ վիզն առաջ պարզած, աշխատում էր բռնել ճյուղը, Վորսորդը, սիրտը նվազած, հրացանն ուղղեց դեպի փոքրիկ, անոգնական կենդանու գլուխը...

Մի ակնթարթ ևս, և փոքրիկ պախրան վշտալի ձայն արձակելով, կրնկներ խոտի վրա... Յեվ հենց այդ վարկչանին ծերունի վորսորդը հիշեց, թե ինչպիսի հերոսությամբ էր պաշտպանում մայրը հորթուկին, ինչպես իր Գրիշուկի մայրն իր կյանքով պաշտպանեց վորդուն գալլերից...

Ծերունի Յեմելյայի սրտում կարծես մի բան կտրվեց և նա հրացանն իջեցրեց, Հորթուկն առաջվա նման ման էր գալիս թփի մոտ, տերևներ պոկելով և ամենավորքը խշշոցին ականջ դնելով:

Յեմելյան արագ վտարի կանգնեց և շվիացրեց: Փոքրիկ կենդանին կալծակի արագութեամբ անհալտացալ թփերի յետեւում:

— Ի՞նչ լավ ե վազում, — ասաց ծերունին, մտախոն ժպտալով: — Նեախ պես թռալ: — Լիսկո, ախր մեր հորթուկը փախալ: Դեռ պետք ե մեծանա... Այ դո՛ւ, ի՞նչ ճարպիկն ե:

Ծերունին չերկար ժամանակ կանգնած եր միևնույն տեղում, ժպտում եր և հիշում հորթուկին:

Մյուս որը Յեմելյան մտեհում եր իր խրճիթին:

— Ա՛... Պապի, բերի՛ր հորթուկը, — հարցրեց Գրիշան, վոր ամբողջ ժամանակ անհամբերութեամբ սպասում եր ծերունուն:

— Վո՛չ, Գրիշկա... Բայց տեսա...

— Դեղի՞ն եր:

— Ինքը դեղին եր, դնչիկը սեւ: Թիփի մոտ կա նզնած, տերեւներ եր պոկում... Յես նշան առա...

— Յե՛վ վրիպեցի՛ր:

— Վո՛չ, Գրիշկա, փոքրիկ կենդանուն խղճացի... Մորը խղճացի... Հենց վոր շվացրի, հորթուկն անտառը փախալ...

Ծերունին չերկար ժամանակ պատմում եր տղային, թե ինչպես չերեք որ անտառում հորթուկ եր վորոնում և թե ինչպես հորթուկը փախալ:

Տղան լսում եր և պապիկի հետ ուրախ ծիծաղում:

— Յես քեզ համար մայրահալ եմ բերել, Գրիշկա, — ավելացրեց ծերունին, պատմութունը վերջացրելուց հետո: — Միևնույն ե դաչիքը կուտեիր:

Մայրահալը փետրահան արին, իսկ հետո կճուճը գցեցին: Հիվանդ չերեխան մեծ բավականութեամբ կերալ մայրահալի ապուրը և ննջելիս մի քանի անգամ հարցրեց ծերունուն.

— Այդպես ել փախալ հորթուկը:

— Փախալ, Գրիշուկ:




Յեմելյան մտնում էր իր խոհրդին:

— Դեղին էր:

— Ամբողջ մարմինը դեղին էր, միայն դնչիկն ու կնճղակները սև էին:

Յերեխան ալդպես էլ քնեց և ամբողջ գիշերը տեսնում էր դեղին հորթուկին, վսրն իր մայրիկի հետ ուրախ զբոսնում էր անտառում, իսկ ծերունին քնած էր վառարանի վրա և նուչնպես ժպտում էր չերագում...




388

II
H

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003770



103

Ф. 60 ч. 10.

054.

ЦЕНА

11
23272

Пров. 1940

Д. Мамин-Сибиряк
ЕМЕЛЯ ОХОТНИК
ГИЗ. ССРЛ. ВРЕВАН 1936